նի զանազան մասերը, Արեւուն նուիրուած և անոր անունով կոչուած են. Նոյն իսկ Արշակունի Թագաւորներուն կտրած դրամներուն վրայ կ՚ըսուի թէ՝ արեւուն պատկերը դրոշմուած էր։

Ե․

Բոլոր այն ազգերը որոնք առաւել կամ նուազ թափով մը պաշտած են Արեգակը, կրակին հանդէպ ալ մասնաւոր սէր և ակնածանք ցոյց տուած են՝ նկատելով զայն արեւուն փոխանորդը երկրի վրայ։ Մասնաւորաբար պարսիկները որ միեւնոյն ժամանակ թէ՛ արեւապաշտ և թէ՛ կրակապաշտ էին ու մեր մէջ ալ ներմուծելու համար սոյն կրօնքը յայտնի է թէ խիստ արիւնահեղ պատերազմներ մղեցին Շապուհ, Յազկերտ, և Պերոզ Պարսից թագաւորները։

Յ․ ԱԼՈՃԵԱՆ

Շարայարելի

ՕՐԱԳԻՐ ԱՌԺԱՄԱՅՆ

ԱԶԴՄԱՆՑ ՄՏԱՑ ԵՒ ՍՐՏԻ

1 8 4 2

ԴԵԿՏԵՄԲԵՐ

2

Զզաւազան արքայի, զզէն մարտկի, զգրիչ իմաստնոց, զզարդ կանանց, զամենայն յափշտակէ մահ և տանի։

3

Միանգամ մեռանի մարդ, սզաւորն հանապազ։

4

Մարդկութիւն մատեան է Աստուծոյ, և սիրտք՝ տառն նորա։

5

Ի ծննդենէ մինչև ցծերոյթ ձգին սանդուխք կենաց, ուստի իջանեմք ի գաւիթ տապանին. այլ մահ զբազումս ի գլխոյ սանդխոցն յանկարծ ի վայր գլորէ։

5

Միծառն ճռուողելով ընդ օդս աւետէ զգարուն և զմանկութիւն. պար խորդոց յերեսս երկնից զրեն զչու մարդոյ։

5

Զհետ մեղաւորին շրջին մեղք իւր որպէս սևադէմ արբանեակք։

5

Քնար գիշերոյ եօթնաղի. այսինքն են. Խաւար, Լուսաւորք, Լռութիւն, Քուն, Ցիշատակք, Տխրութիւն և Մահ։

5

Յոյս է որ զսիրտ վշտօք ճնշեալ՝ որպէս յառաձգութեամբ ընդլայնէ և ամփոփէ։

10

Ի դաստիարակութեան յուղղել զդիւրաթեքք բարունակս՝ զզոյշ լեր մի՛ ուղղակի վարսեսցես զնեցուկն, զուցէ հատեալ զարմատ տնկոյն և ցամաքեսցի։

11

Ի մի թռիչ կարես սլանալ յերկին և ի մի վազս զթել ի դժոխս. գործ մի եէթ բաւական է ի շարժումն քեզ։

15

Ճշմարիտ բարեկամք նմանեսցին զուգից աչաց որք ոչ երկու՝ այլ մի տեսանեն։

21

Երկու թիակք և մի ուղղեակ, այս է բարեկամութիւն հաւատարիմ։

21

Որ զամենայն զիտել նկրտի, յաճախ զանձն մոռանայ։

22

Զեփիւռ ի զզուելն զվարդ թափէ ըզթերթս նորա, այսպէս և աղապատանք զմատաղ սրտի՝ խամրեն զնա յաճախակի։

23

Բանաստեղծ՝ թարգման ամենայն ըզգածմանց։

26

Ամենայն իղձք ճրագունք են կազմեալք զորս կայծ մի յուսոյ բորբոքէ։

26

Բազումք յըղձից այն ինչ ծնեալ և մեռանին և թաղին ի սրտի։

31

Տարի բոլորեալ՝ սիւն մի խորտակեալ ի տաճարի ժամանակին։ Հ․ Ղ․ Ա․

digitised by A.R.A.R.@